մի այլ տեղ՝ կարևոր գործով, ուրնին վերադառնալով, 'ի 10-ն մայիսի յաւուր կիւրակէի յատուկ հրաւիրակաւ 'ի դիմաց Նորին Բարձրութեան՝ և պաշտօնական հագուստներ հագած անձամբք և կառքով Նորին՝ գնաց Վ. Հ. Կաթողիկոսն յայցելութիւն Բարձր. Փոխարքային, և արժանաւոր պատուով և սիրով ընդունուեցաւ և մեծարեցաւ. և կէս ժամու չափ տեսնուելով՝ նոյն կառքով վերադարձաւ 'ի Վ. Հարանն։

Ի յաջորդ աւուրն Նորին Բարձրութիւն մեծ Իշխանն և Փոխարքայն ևս հաճեցաւ փոխադարձ այցելութեամբ պատուել զՆորին Ս. Օծութիւն, և արժանին մեծարանօք ընդունուեցաւ 'ի Նորին Վ. Հափառութենէ. և կէս ժամէն աւելի տեսակցեալ՝ վերադարձաւ։

Ի վերայ բեմի Ս. Սարգիս եկեղեցւոյ Վանուց Երեւանայ քնթերցեալ ճառն.

ՎԵՀԱՓԱՌ ՏԷՐ.

Արդարև Հայաստանի այժմեան Մայրաքաղաքն Երևան, այս քանի անգամ է, որ շնորհաբեր այցելութեամբ մեծի Քահանայապետիդ Հայաստանեայցս Սուրբ Եկեղեցւոյ՝ ուրախանայ և բերկրիայն, և այժմ իսկ բերկրապատար խնդութեամբ լցուած, աւասիկ Եկեղեցացոյց իւր որդիքը Հոգևոր Գլխոյդ մօտ, ըստ Աւետարանին տեսանել զիւր ցանկալի քաջ և արթուն Հովուապետդ և լսել քաղցրալուր և փրկարար Հայրական խրատներդ. ուստի և Երրայեցւոց երջանիկ ծերոց և մանկանց նման հեզխառն ուրախութեամբ "Ովսաննայ" կարդալով Ձեզ՝ շնորհաւորեմք Ձեր շնորհածաւալ այցելութիւնդ մեր փոքրիկ Հօտին, և ամենայն ջերմեռանդութեամբ հոգւոյ մաղթեմք յԱստուծոյ, որ Հրեշտակի խաղաղութեան յանձնելով՝ Հայոց Ազգին երջանկութիւն պատճառող թանկագին Ձեր անձը, ուրախ գնացք տայ Ձեզ և յաջող վերադարձ։ Առ որ և Մօրս մեր Ս. Եկեղեցւոյ հետ ձայնակից լինելով երգեմք. "Աղբիւր կենաց և փրկութեան մերոյ"։"

Ա-ոյ աշխէրդ Բ. Դաստուրան թէ մեր-
Դարձոյն երևանայ. Ամէն գէորգեան։

Ի 23 Ապրիլի, 1870 թվ.
Յերևան։

Գ-ՐԴ ՏԵՐԵԴԵՐՁ

Ս. ՕԾՄԱՆ Ջ. Տ. ԳԷՈՐԳԵԱՑ Դ.

ՎԵՀ. ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՑՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ։

Անցեալ 21-րդ օրը՝ յորում էր Գ. Դ Տարեդարձ Ս. Օծման Վ. Հ. Կաթողիկոսի ամենայն Հայոց, Մայր Աթոռոյ մերոյ համայն Ս. Ուխտիս համար մխիթարական և բերկրապատար հրճուանօք լի ծագած էր։

Նոյն օրը՝ ամենայն զգայուն սրտեր և եռանդուն անձինք՝ Ս. Առաքելոցն Բարթուղիմեայ և Թադէի, և Ս. Գրիգորի մեծի Լուսաւորչի արժանաւոր Յաջորդի՝ Հայաստանեայց Ազգի և Եկեղեցւոյ անձնանուէր և քաջ Հովուապետի և Գլխոյ՝ Տ. Տ. Գէորգեայ Դ-ի՝ 'ի Գահակալութիւն Մայր Աթոռոյս և 'ի Հայրապետութիւն ամենայն Հայոց Օծման Դ-րդ Տարեդարձին առթիւ՝ բարենպատակ և խորին համակրութեամբք յափշտակուած՝ և հասարակաց այնպիսի բարեխնամ Հոր սխրագործութեամբք և բարի բարի անձկութեանց իրական ապացոյցներով ոգե-

ւորուած և զմայլած՝ անպատում բերկրութեանց և հոգևոր մխիթարութեանց նշանները կը փայլեցնէին 'ի դէմսն։

Այս առթիւ 'ի նոյն աւուր Մայր Աթոռոյս մէջ կատարուած հանդէսը՝ փառաւոր և միանգամայն նշանաւոր էր։

Առաւօտեան Յամերգութենէն զկնի՝ բոլոր միաբանական Ուխտս՝ Ս. Տաճարին արևմտեան մեծ դրան զառաջեաւ հրապարակին մէջ՝ 'ի ձայն եղջիւր գանգակաց գումարուած՝ թափօր կազմեց, և սովորական բարեմաղթութեան հանդէսը ըստ արժանւոյն կատարուեցաւ։

Յետ այսորիկ սկսաւ Ս. Պատարագը, զոր մատոյց Գեր. Գրիգոր Ս. Եպիսկոպոս Մուշեղեանց։

Օգնի արձակման Ս. Պատարագին՝ աւելի քան զմի ժամ հանգիստ առաւ Միաբանութիւնս։ Այսմ միջոցի մեծ բաղմութիւն ժողովրդեան լցեալ էր վանուցս մէջ՝ և Երևանայ զօրաց նուագածուաց խումբը այլ և այլ և մերթ մեր Ազգային երգոց եղանակներ կը ներդաշնակէր և կը զուարճացնէր զբազմութիւնն։

Միաբանութեան սեղանատունը յոյժ գեղեցիկ զարդարեալ և պատրաստեալ էր։ Ի ժամ ասիական 4-էն (11) մի քառորդ պակաս սեղանի զանգակը 'ի ճաշ հրաւիրեց համայն Միաբանութիւնը և մերաղնեայ և օտար պաշտօնակալները և յառաջաւոր անձինքը Լայլն։

Սեղանատան արևմտեան դրան առջև Հայրապետական բազմոցին տեղը՝ խիստ շքեղ պճնեալ էր։ Գմբէթին շրջանակը և սիւները վարագոյրներով, վարդենեօք և զանազան այլ ծաղկամբք և կանաչ ու գեղեցկաբոյր տերևներով զարդարուած էր։ Ի ճակատին ընդ արևելս՝ երկու սեանց միջոցաւ՝ գմբէթէն կախեալ՝ վարդենեօք և այլ և այլ ծաղկամբք և կանաչ տերևներով և այլովք հիւսուած պսակին 'ի միջակին փառաւորուած էր Նորին Ս. Օծութեան Ս. Հ. Պաթողիկոսի պսակը։

Նուագածուաց խումբը մերթ ընդ մերթ ընդհատմամբ՝ կը շարունակէր զանազան և ազգային երգոց եղանակներ հնչել։

Սեղանն աւարտուելու մերձեցած էր, Գեր. Եղիազար Ս. Աբք Եպիսկոպոս՝ համառօտ բայց հետևեալ պատշաճ և գեղեցիկ ատենաբանութիւնը խօսեցաւ։

"Կանխադուշակ նախաձայնութեամբ 'ի դէմս Մարդեղութեան Աստուածորդւոյն Յիսուսի՝ ասէ Ամենասքանչելն Եսայիաս. "Հոգի Տեառն 'ի վերայ իմ, վասնորոյ և օծ իսկ զիս" և այլն։ Զայս 'ի համառօտութիւն բերելով՝ հաւաստեաւ տեսանեմք 'ի ստուերական օրէնս հնոյ ուխտի, զի Մարգարէք և թագաւորք օծանէին իւղով, որով և Հոգին սուրբ իջանէր 'ի վերայ նոցա, և զօրացուցանէր զնոսա լինիլ առաջնորդ անապատաբար ուղևորութեան Իսրայէլեան բանակին, այն ամենայն ըստ Աստուծոյն ստուեր էին հանդերձելոյն և ճշմարտին. վասն զի՝ Քրիստոս Եկեալն Քահանայապետ 'ի Նախանշանակութենէ և հաճութեամբ Հօր և Հոգւոյն սրբոյ խոնարհեալ էջ 'ի հայրականն ծոցոյ՝ կատարեաց առեցելովն ընդ Աստուածութեան զանօրինական խորհուրդն սակս բարոյական կրթութեան և փրկագործութեան Ազգի մարդկան՝ դատապարտելոյն Ադամաւ 'ի մահ, և հուսկ ապա և մեղ եթող յաւերժական յիշատակ յաղթանակի իւրոյ հրաշափառ տօնս սուրբ Համբարձման։ Ըստ այսմ օրինակի ճշմարիտ պատկեր Քահանայապետին Յիսուսի՝ բարոյական Գլուխ և ծայրագոյն Պատրիարք Առաքելական Եկեղեցւոյս Հայաստանեայց՝ Տէր Գէորգ Դ. Կաթողիկոս ամենայն Հայոց՝ յառաջ քան զյաւիտեանս Երրորդականն խորհրդով սահմանեալ և նախանշանակեալ՝ կարգեցաւ 'ի ժամանակի արժանաւոր Գահակալ Աթոռոյ

սրբոց Առաքելոցն Թադէոսի և Բարդուղիմեայ, և մեծի Պարթևին սրբոյն Գրիգորի, Առաջնորդ և ընտրեալ Փեսայ անարատ Հարսին լուսոյ Կաթուղիկէ Էջմիածնի, որոյ և այսօր է մեծաշուք տօն տարելից ընտրութեան յիշատակի Օծմանն սրբալոյս Միւռոնաւ և Հոգւով սրբով։ Ուստի համամիտ հանդիսականք, թէպէտ ինձ ոչ անճահ էր կացրդական գովեստիւք դրուատել զնուիրական զօրս զայս 'ի բերկրութիւն հոգեպարար մնաց, խորհրդոց և սրտից ձերոց և իմ իսկ գլխովին. այլ սակայն որքան լուսաւոր ելեալ արեգակն՝ դուն ինչ ընդ ամպով ծածկիլն՝ ստուերս բերէ երկրի. այսպէս և ինձ. վասնորոյ 'ի դժուն ինչ համառօտել փութամ զբանս, ճանաչելով զիմն չափաւորութիւն. և զէպք միջոցիս աննեղելի. բայց աղէ՝ լուր ով դու քաջդ յիմաստս և 'ի խնդիրս արդարութեան, զի թէև աստանօր և զարդիս առիթն մեծահանդէս տօնախմբութեանս այս և խրախճանութեանց Աղգասէր հոգևոր Տէրն բացակայ տեսանի 'ի մէջ յաղագս աղգային օգտակարութեան, լուսաւորութեան Եկեղեցւոյս և մերային Դպրոցաց յառաջադիմութեան, սակայն օրհնութեամբ, երևակայութեամբ, սիրոյ ազդմամբ և բարեբաստութեամբ է 'ի միջի մերում բազմեալ 'ի սուրբ սեղան՝ Աջոյն Անեղին Աջ կարկառեալ իրր 'ի մեծոյ՝ օրհնէ զմեզ զամենեսին և մխիթարէ 'ի մխիթարութիւն մեծ. ուստի եղբարք՝ եռանդուն հոգւով բարեմաղթեսցուք յԱստուծոյ վասն Օծեալ մեծի Քահանայապետին մերում Տ. Տ. Գէորգայ Դ.ի՝ տալ զնաղաղ կեանս երկարս, զառողջութիւն, զօրութիւն, կարողութիւն և ամենայն Աստուածահաճոյ և Աղգօգուտ նպատակացն և գործոց յաջողութիւն. ուրեմն և առ այս ևս հանգանակել զձայնս օրհնութեանց՝ առնլով զբաժակս սիրոյ խնճոյիցս 'ի ձեռս մեր՝ գոչել 'ի բարձունս՝ կենցղէ, կենցղէ, կենցղէ՝ Վ.ԷՀարտաւ Տէրն մեր այժմ և յաւիտեան 'ի պարծանս Աղգիս Արմենեան։

Մինչ Ատենաբան Սրբազանը քաջակ 'է յԷ-ին վերջին խօսքերը կ'արտասանէր՝ բոլոր Միաբանութիւնս և սեղանակից քահանայք բարձրացած բաժակք 'ի ձեռին՝ ընդ Ատենաբանին միահամուռ և՝ կրկին և երեքկին սկսան գոռալ գոչել կենցղէ՝, կենցղէ՝, կենցղէ՝ Վ.ԷՀարտաւ Տէր մեր։ և արտաքուստ հրացանների ձայնը, նուագարանների ներդաշնակ եղանակները, և զանգակահարութեանց հնչմունքները զերկիր կը դղրդէին, և այսպէս բաժակները քամելով նստեցան։

Յայսմ միջոցի սկսան Ժառանգ. Ուսումնարանիս աշակերտք երգել։ Ի վերջ ամենայնի՝ վասն համայն ուխտիս և սեղանակցաց, և մանաւանդ վասն հաստատութեան և Աղգօգուտ պայծառութեան և փառաւորութեան Մայր Աթոռոյս Ս. Էջմիածնի՝ կրկին ըստ առաջարկութեան Գեր. Ներսիսարի Ս. Աբք Եպիսկոպոսի կենցղէ՝ և ամէն ձայնից երրորդմամբք և գոռումներով բաժակներ դատարկուեցան։ Եւ այսպէս վերջացաւ նոյն հանդէսը և արձակեցաւ սեղանը։

Յերեկոյին ևս լուսավառութիւն եղաւ։

Այս առթիւ յատուկ շնորհակալութեան արժանի է Գեր. Գրիգոր Ս. Եպիսկոպոս Սազիանեանց, որ ամեն ջանք 'ի գործ դրած յաղագս բարեվայելչութեան հանդիսիս, յաջողած էր անպակաս կատարել զամենայն ինչ՝ խիստ գեղեցիկ և յարմար ըստ իւրումն կարգին և կարևորութեան։

Ի վերջոյ զայս ևս չ'մոռանամք ծանուցանել, որ 'ի նոյն աւուր՝ առտուանց կանուխ՝ երկու հեռագրաթելեր ուղղուեցան յանուն Սրբազնագոյն Հայրապետին մերոյ և Վ.ԷՀ. Կաթողիկոսի, որոց մին 'ի դիմաց բոլոր միաբանութեանս, իսկ միւսն 'ի դիմաց Ցնտեսական ժողովոյ շնորհաւորեցին նորին Ս. Օծութեան Տարեդարձը և բա-

բեմաղթեցին։ Որոց 'ի պատասխանի Նորին Ս. Օծութիւնն ևս բարեհաճեցաւ յայտնել զիւր շնորհակալիս և շնորհել զսուրբ օրհնութիւնն։

ՄԵԾԱՊԱՏԻՒ ՄԻՔԱՅԷԼ ԳԷՈՐԳԵԱՆ ԹԱՄԱՄՇԵԱՆՑ ԵՒ

ՆՈՒԷՐՆԵՐ

Ընդուսական և Մեծապատիւ Միքայէլ Գէորգեան Թամամշեանց՝ յարևշտութիւն նորաձաղիկ որդւոց իւրոց և 'ի յիշատակ հանդուցեալ Խարեպաշտ Հ. Օրն՝ նուիրեց ձուլածոյ և գեղեցկաձև վանդակներ ամենայն պարագայիւք վասն միջին և երկուց կողմանց դասուց Ս. Տաճարիս Էջմիածնի։

Խարեպաշտ նուիրատուին գեղեցիկ և բարենախանձ զգացմամբք ընձայած նուէրները հռչակելով 'ի լուր Ազգայնոց մերոց սիրելեաց՝ միջոցաւ ամենազրոյս, միանգամայն կը փութամք հրապարակաւ մատուցանել մեր խորին շնորհակալեաց և երախտագիտութեանց հաւաստիքը և բարեմաղթել 'ի Տեառնէ, որպէս զի 'ի հաճոյս իւր ընկալեալ զուխտս Նորին՝ տացէ Տէր շնորհօք իւրով և ողորմութեամբ՝ արևշատութիւն որդւոց Նորին, զարգանալ և փայլել յամենայն բարեմասնութիւնս հոգւոյ և մարմնոյ՝ յօգուտ և 'ի պարծանս Հայ Ազգիս և Ս. Եկեղեցւոյս ևս 'ի մխիթարութիւն սրտից ծնողացն։ Լուսաւորեսցէ Տէր և զհոգի հանգուցեալ Հ. Օրն բարեպաշտի, և արժանացուսցէ վայելից յաւիտենական կենաց և փառաց։

"Երանի՜ որ ունիցի յիշատակ 'ի Սիօն"։

Նմանապէս Տփխիսայ Կաթուղիկէ Ս. Աստուածածնին և Մողնւոյ Ս. Գէորգ Եկեղեցեաց արդեամբք՝ եօթն կանգուն բարձրութեամբ և տասն լայնութեամբ մի զոյգ կերպասեայ և ծաղկաւոր վարագոյր՝ նուիրուած է վասն Ս. Աստուածածնի և Ս. Յովհաննու Մկրտչի խորանաց Ս. Տաճարիս Էջմիածնի՝ 'ի ձեռն Գեր. Մակար Ս. Բրք Եպիսկոպոսի։

Մայր Աթոռոյս հարազատ և անձնանուէր որդիքը մինչ կընթեռնուն այս տողերը, արդարև մեք անշուշտ եմք, զի նոքա ոգեւորուած և վառուած 'ի սէր Ս. Աթոռոյս և Ազգիս, և միանգամայն իրրև հարազատ սերունդ և զաւակներ Ազգաշէն և Եկեղեցաշէն երանելի նախնեաց մերոց՝ պիտի նախանձին և փութան այսպիսի նուէրներ ընծայել Մայր Աթոռոյ մերում, թէ վասն Ս. Տաճարիս, թէ վասն նորակառոյց Ուսումնարանիս և թէ Տպարանիս։ Եւ այսպէս 'ի հարկէ՝ ամենայն ազգային անհատ ըստ իւրումն կարողութեան և ձեռնհասութեան կատարելով իւրեանց պարտաւորութիւնքը ըստ ամենայնի օգնելով և առատօրէն նպաստելով Մայր Աթոռոյս, առաւել ևս կը խրախուսէ և կ'ոգևորէ Նորին անձնանուէր և ազգասէր Գլուխը և զմեզ զմիաբանութիւնս։

ՑՈՒՑԱԿ ՆՈՒԻՐԱՏՈՒԱՑ Ի ՆՊԱՍՏ ՇԻՆՈՒԹԵԱՆՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՍ.

(Շարունակութիւն)

ՑԵՐԵՒԱՆ ԵՒ ԻՎԻՃԱԿՍ։

	ռուբլի
Ղահրաման Մելիք – Աղամալեանց . . .	50
Արսէն Սուլթան Գեղամեանց	40
Վարդան Խուդաբաշխեանց	40